ԴՊՐՈՑ
ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ

ԱՄՍԱԳԻՐ

ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ

№ 11 1875—1876 ՄԱՑԻՍ

ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ

1876 ամի

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ

Ի ՏՊԱՐԱՆԻ Ս. ԴԱՑԻԱՆԵԱՆ ՎԱՆԻՑ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ

ԸՆԹԵՐՑԱՐԱՆ

ՌՈՒԲՆԻԿԱՆՈՒԹԻՒՆ

1. Հօր խօսակցութիւնը իւր զաւակների հետ ազգային կրօնի եւ եկեղեցու վերայ.—7 խօսակցութիւն:
2. Օլէ — Բուլ (կենսագրութիւն):
3. Ս. Ղազարեան հայր:
4. Դանտէ Ալիգիէրի (կենսագրութիւն):

ՀՕՐ ԽՕՍԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԻՒՐ ԶԱԻԱԿՆԵՐԻ ՀԵՏ ԱԶԳԱՑԻՆ ԿՐՕՆԻ ԵՒ ԵԿԵՂԵՑՒՈՒ ՎԵՐԱՑ։

7 ԽՕՍԱԿՑՈՒԹԻՒՆ։

—Սիրե՛լի զաւակներա, այսօր, իմ երկարատև հիւանդութիւնից յետոյ, պարձեալ կամենում շարունակել ձեզ հետ մեր խօսակցութիւնը մեր Ս. Հաւատի և եկեղեցու վերայ։

—Սիրելի Հայրի՛կ դու պիտես թէ ո՛րպիսի ուրախութեամբ մենք միշտ լսել ենք քո պատմութիւնները մեր Հաւատի և մեր սուրբերի վերայ։ Ահա և այժմ շատ ուրախ ենք և պատրաստ ենք լսել քո լա՛ւ լա՛ւ պատմութիւնները։

—Ուրեմն ես սկսում եմ։ Դուք, յոյս ունիմ, մոռացած չէք լինի որ՝ վերջին անգամ իմ պատմութիւնը վերջացաւ մեր Ս. Հայրապետ Աթանասիոսի մասին։ Ես Ս. Աթանասը ունէր երկու որդի—Գրիգորիս և Յուսիկ։

—Գրիգորիսը իւր մանկութեան հասակից ցուցանում էր զարմանալի ընդունակութիւններ

և խելք, և մանաւանդ կրօնական ջերմեռանդութիւն: Փայտակարան անունով ընդարձակ նահանգը, որը Հայաստանի մի մասն էր կից Ղուանից աշխարհին, նոր էր ընդունել քրիստոնէութիւնը, բայց ժողովուրդը դեռ և ս շատ հաստատ չէր նոր կրօնի մէջ և վարուէր առ հասարակ անհանգիստ, իշխանութեան անհնազանդ, աւազակաբարոյ կեանք: Ներսիսեան մարդիկ խորհուրդ տուին Տրդատ թագաւորին տալ նոցա եպիսկոպոս և Հռաչնորդ Սուրիգոր Լուսաւորչի ցեղից, որպէս զի գուցէ նոքա Լուսաւորչի պատիւը պահելով՝ լսեն իւրեանց Հռաչնորդի խօսքին և փոխեն իւրեանց վարքը և բարքը: Հաւանելով այդպիսի խորհուրդը՝ Տրդատը համաձայնուեցաւ, և Թէպէտ Գրիգորիսը այդ ժամանակ դեռ շատ փոքր էր, 16 տարեկանի չափ, բայց տեսնելով նորա հոգու մեծութիւնը և մեծ հնարքը, և միտքը բերելով որ՝ Սողոմոնը 12 տարեկան հասակում թագաւոր եղաւ Իսրայէլացիների վերայ, Տրդատը ամենայն վստահութեամբ ձեռնադրել տուեց նորան եպիսկոպոս և նշանակեց Փայտակարանի և Ղուանից կողմերի Հռաչնորդ: Նորա հետ միասին Տրդատը նշանակեց նոյն կողմերի վերայ նոր իշխան և կառավարիչ—իսկ

ազգակից (Երշակունի ցեղից) Սանատրուկը: Սա նոյնպէս վատ քնաւորութեան տէր էր և սկսեց վարել անբարոյական և համարեա հեթանոսական կեանք: Դրիգորիսը իբրև սրտացաւ և արթուն Հովիւն միշտ շրջումէր իր-վիճակի մէջ, շինումէր եկեղեցիներ, կարգումէր քահանաներ, քարոզումէր ժողովրդեան, խրատումէր և յանդիմանումէր վատաբարոյ մարդիկ, ուստի Սանատրուկը և անբարոյական մարդիկ վշտանումէին նորա խօսքերից և շատերը թշնամանալով նորա հետ՝ մոքումը դրին չար խորհուրդ—ազատուիլ նորանից, բայց ըստ պատեհութեան յարմար ժամանակին: Իսկ երբ հասաւ նոցա Տրդատի մահուան լուրը՝ Սանատրուկը ապստամբեցաւ և թագաւոր անուանեց իւրեան, և յորդորեց ժողովուրդը սպանել Դրիգորիսը: Եւ արդարև չարագործ մարդիկ բռնեցին իւրեանց Հովիւը, կապեցին ձիու ագռ (պոչի) վերայ և քարշելով գետնի վերայ, տրորելով ու կոխոտելով նահատակեցին: Ս. Դրիգորիսի սարկաւագները տարան նորա մարմինը փոքր Սիւնիք գաւառը և թաղեցին Ամարաս կամ Ամարէն աւանում, Ս. Հուսաւորչու շինած եկեղեցու մէջ:

Հայաստանեայց եկեղեցին արժանապէս դա-

սեց Ս. Կրիգորիսը իւր հարազատ սուրբերի շարքում և յիշատակվում է սորա անունը Ս. Պատարագի ժամանակ «Ողջ եղօցն» կոչուած յիշատակութեան մէջ։

—Ս. Ներսէսի միւս որդին—Յուսիկը ամուսնացաւ Տիրան թագաւորի (այդ ժամանակ նա դեռ թագաւոր չէր) աղջկայ հետ և ունեցաւ երկու որդի՝ Պապ և Ներսեհ։ Յետոյ Յուսիկը հրաժարուեցաւ աշխարհից և վարում էր սուրբ և առաքինի կեանք պարապելով ճգնութեամբ, Ս. Գրքի ընթերցանութեամբ և աղօթքով։ Նոր հօր՝ Ս. Ներսէսի մահից յետոյ՝ Յուսիկը ընտրեցին Հայոց Կաթողիկոս։ Ազգութիւն նախարարները և իշխանները շքեղ հանդէսով տարան Նորան Կեսարիա քաղաք և ձեռնադրել տուին եպիսկոպոս և կաթողիկոս, և ապա առաւել ևս մեծ հանդիսով վերադարձան։ Ինքն Տիրան թագաւորը, որոյ փեսայ էր Յուսիկը, շքեղ պատրաստութեամբ ընդ առաջ գնաց նոր կաթողիկոսին և տարաւ Ոստանաշատ քաղաք։

—Մի քանի տարուց յետոյ Յունաց Յուլիանոս կայսրը պատերազմ բացեց Պարթից Շապուհ թագաւորի հետ և մեծ զօրքով գիմեց Նորա վերայ, բայց առնչի մեծ յաջողութիւն

ունենալու համար մեր Տիրան Թագաւորից օգնութիւն խնդրեց և ստացաւ: Իսկ երբ Տիրանը յանձն չառաւ անձամբ անձին գնալ նորա հետ միասին Պարսիկների վերայ, Յուլիանոսը կաւկած տանելով նորա հաւատարմութեան մասին՝ պատանդներ պահանջեց նորանից: Սա կոչուեցաւ Ձար Յուլիանոս, որովհետև ուրացաւ Ըստուած և Քրիստոս և հալածանք բարձրացրեց քրիստոնեաների վերայ՝ կամենալով չնչել նոցա, և այնքան յիմարացաւ որ իւր անձը աստուածացնել կամեցաւ և հրամայեց որ՝ ժողովուրդը երկրպագութիւն տայ և պաշտէ նորա պատկերը: Նոյն չար խորհրդով նա տուեց Տիրանին իւր պատկերը՝ տախտակի վերայ նըկարած, որոյ վերայ նկարած կային նուագ գոյներով նաև սատանայի կերպարանքներ, և հրամայեց կախել այն եկեղեցու մէջ արևելեան կողմում: Տիրանը վախենալով նորանից՝ ընդունեց այդ պատկերը և կամեցաւ իւր ձեռքով կախել այն իւր պալատի եկեղեցու մէջ, բայց Յուսիկը յորդորեց նորան չանել այդպիսի կըռապաշտական բան, և երբ նա չլսարգեց Հայրապետի խօսքը՝ սա խլեց նորա ձեռքից այն պիղծ պատկերը, գարկեց գետնին և փշրեց ոտներով: Վախենալով Թէ՝ գուցէ Յուլիանոսը

իմանայ այդ և սաստիկ բարկանայ իւր վերայ և ծանր կերպով վնասէ՝ Տիրանը սաստիկ բարկացաւ Յուսիկի վերայ և—յիշելով նորա յանդիմանութիւնները իւր վատ և անօրէն գործքերի համար—հրամայեց մտրակով ծեծել նորան մինչև որ՝ սուրբ նահատակը աւանդեց իւր հոգին: Ս. Յուսիկի մարմինը տարան նորա սարկաւագները և թաղեցին Թորդան գիւղում իւր հօր մօտ: Նորա կաթողիկոսութիւնը տևեց միայն վեց տարի, իսկ նահատակութիւնը կատարուեցաւ 362 թուին:

—Ինւզանդ Փաւստոս պատմագիրը ասումէ թէ՝ Ս. Յուսիկը բարձրահասակ էր, վայելչակազմ և շատ գեղեցկադէմ, իսկ հոգուով պայծառ և վարքով հրեշտակակրօն, և թէ՝ ամենևին աչառութիւն եւ երկիւղ չունէր ոչ ոքից և միշտ քարոզելով Աստուծոյ պատուիրանները՝ յուսաւորումէր ժողովուրդը: Նա այնչափ սիրելի էր ժողովրդին և նախարարներին որ՝ նորան սպանելու պատճառով ամենեքեանք սկսեցին տրտնջալ Տիրան թագաւորի դէմ, իսկ Հայոց Հարաւային գունդի (զօրք) սպարապետ Ներշապուհեաց նախարարը՝ Օրայ անունով՝ մինչև անգամ ապստամբեցաւ նորանից:

—Հայաստանեայց եկեղեցին Ս. Յուսիկ Հայ-

բաւեւտը նոյնպէս ընդունեց իւր Հարազատ սուրբերի շարքում և յիշատակումէ նորա անունը Ս. Պատարագի ժամանակ մի և նոյն "Ընտրեալոցն" կոչուած յիշատակութեան մէջ:

—Ս. Յուսիկ կամոդիկոսի երկու որդիքը—Պապ և Ըթանագինէ նման չէին իւրեանց Հօրը և պապերին. նորա վարումէին աշխարհասէր, շռայլ և վատ կեանք, և ամենևին չունէին սէր ուսման և բարեպաշտութեան. Այս պատճառով նորա անարժան Համարուեցան յաջորդել իւրեանց Հօրը. և թէպէտ Ըթանագինէն ունէր մի որդի—Ներսէս, բայց նա փոքր էր և ուզարկուած էր Կեսարիայից (ուր սովորումէր) Ռիւզանդիա ուսման Համար: Եւ որովհետև ոչ ոք չկար Ս. Լուսաւորչու ցեղից, կամոդիկոս ընտրեցին մի ծերունի մարդ, անունով Դանիէլ և ցեղով Ասորի: Նա աշակերտ էր Ս. Գրիգոր Լուսաւորչի և քահանայ ձեռնադրուած նորանից և յետոյ քորեպիսկոպոս, այսինքն՝ Ընտրեալ նորդի օգնական կամ Յաջորդ կարգուած: Ծերունի Դանիէլը ապրումէր Տարօն նահանգի Հացեաց Դրախտ կոչուած վանքում: Ներկայանալով Տիրան թագաւորին՝ բարեպաշտ Դանիէլը սկսեց սաստիկ յանդիմանել նորան Ս. Յուսիկ Հայրապետը սպանելու Համար և յոր-

դորեց նորան ապաշխարել. բայց երբ Տիրանը արհամարհեց և մերժեց նորա պատուէրը՝ բարեպաշտ ծերունին լացեց և անիծեց նորան, ուստի բարկացած Թագաւորը հրամայեց խեղդելով սպանել նորան: Ս. Դանիէլի մարմինը նորա աշակերտները տարան և թաղեցին նոյն Հացեաց Դրախտ անուն վանքում:

Հայաստանեայց Եկեղեցին նորան ևս դասեց իւր հարազատ ուսուրբերի շարքում և յիշատակումէ անունը Ս. Պատարագի ժամանակ մի և նոյն վերոյիշեալ "Ընաքելոցն,, յիշատակութեան մէջ:

—Հայոց ժողովուրդը և նախարարները ցանկանումէին կաթողիկոս ունենալ անպատճառ Լուսաւորչու ցեղից և այդ պատճառով որոշեցին ընտրել թէ լաւ թէ վատ Ս. Յուսիկի որդիկներից, և թէպէտ նոքա ամենևին չէին կամենում ընդունել այդ պաշտօնը, որովհետև շատ աշխարհասէր էին և չունէին եկեղեցական աստիճան, բայց նոցա զօրով և բռնութեամբ ստիպեցին ձեռնադրել տուին: Եւ նու ամենայնիւ նոքա չհամաձայնուեցան, մերժեցին սուրբ կարգը և սկսեցին վարել աւելի վատ կեանք, բայց շուտով ստացան արժանաւոր պատիժը հանդիպելով սարսափելի մահուն

—Մի օր երկու եղբօր միասին կայծակը զարկեց և սպանեց:

—Բոլոր իշխանները և նախարարները հնազանդել էին տարակուսած և հաւաքուելով թագաւորի մօտ՝ յորդորեցին նորան ուրիշ արժանաւոր մարդ ընտրել կաթողիկոսութեան համար, որպէս զի չծագի ժողովրդի մէջ մեծ խռովութիւն: Համաձայն հաւանութեամբ ընտրեցին փառներսէհ կամ փառէն անունով մի մարդ, Ուշիլատ քաղաքից և Տարօնի Յովհաննէս կարապետի վանքի միաբան, որ և նստաւ Հայրապետական Աթոռի վերայ նոյն 362 թուականին: Խուզանդ պատմագիրը ասումէ թէ՝ Տիրան թագաւորը արքայական հրովարտակով, նախարարներով, իշխաններով և մեծ հանդէսով ուղարկեց փառներսէհը Կեսարիա՝ կաթողիկոսական ձեռնադրութիւնը ստանալու համար:

Փառներսեհը նշանաւոր չհանդիսացաւ ոչինչ բանով, զուցէ այն պատճառով որ՝ իբրև օտարական, և ոչ ուսուցչու ցեղից, չէր վայելում ժողովրդի և նախարարների համակրութիւնը և ազակցութիւնը, թէև Խուզանդի վկայութեամբ բաւականին մաքրակեաց և առաքինի մարդ էր: Նա կաթողիկոսութիւնը վարեց միայն 3 տարու չափ և վախճանեցաւ 364 թ.:

—Այսպէս, սիրելիներս, Հայաստանեայց եկեղեցին ամբողջ տասը տարի չկարողացաւ գըտնել իւր համար արժանաւոր գլուխ, ուստի ոչ սակաւ խանգարուեցաւ նորա բարեկարգութիւնը։

—Սիրելի զաւակներս, այս անգամ վերջացնումեմ խօսքս։ իսկ հետևեալ անգամ կպատմեմ մեր Ս. Հայրապետների մէջ շատ երևելի հանդիսացած Ներսէս Ա. ին և Մեծ կոչուած կաթողիկոսի պատմութիւնը։

—Շատ շնորհակալ ենք, Հայրի՛կ որ մեզ հասկացնումես մեր կաթողիկոսների գործերը և պատմութիւնները։

—Հայրիկ, ես շատ զարմանումեմ և ափսոսումեմ որ Արթանիսի պէս երևելի և սուրբ մարդու որդիքը—Պապ և Արթանագինէն—այնպիսի վատաբարոյ մարդիկ էին։

—Հիմարիս մէջ, սիրելի Արդան, շատ է պատահում որ՝ լաւ և առաքինի մարդու որդին անպիտան է դուրս գալի, և ընդ հակառակն՝ անպիտանի որդին—երևելի և առաքինի

ՕԼԼԷ—ՔՈՒԼԼ։

(Կենսագրութիւն)։

1810 թուականին Ներպինում, Նորվեգիայի տերութեան մէջ, ծնուեցաւ երևելի երաժիշտ Օլլէ—Նուլլը։ Մանկական մատաղ հասակից ծնողները նկատեցին նորա մէջ զարմանալի երաժշտական ընդունակութիւն։ Այս ունէր հօր եղբայր, որը շատ լաւ ածումէր մեծ ջութակի վերայ, և փոքրիկ Օլլէն մեծ ուրախութեամբ դնումէր նորա մօտ միայն այն նպատակով որ՝ լսէ նորա երաժշտութիւնը։ Հօր եղբայրը շատ սիրումէր նորան և միշտ ուրախութեամբ զարմանումէր նորա հիանալի երաժշտական լսողութեան վերայ։ Երբ Օլլէ—Նուլլը դեռ երեք տարեկան էր, հօր եղբայրը կանգնացնումէր նորան իւր մեծ ջութակի պահարանի (արկղ) մէջ և տալիս էր ձեռքին քաղցր բան այն պայմանով որ՝ նա մնայ անշարժ իւր ածելու բոլոր ժամանակ։ Այդ դուրս էր փոքր մանկան կա-

բողոքիւնից. երաժշտութիւնը նորան ոգևորում էր, յափշտակում էր, նորա աչքերը վառվում էին և փայլում, թուշերը կարմրում էին, ինքն ամբողջ մարմնով դողում էր, և սկսում էր ոտով զարկել հաւասարաչափ եղանակը:

Վերադառնալով տուն՝ Օլէն առնում էր քանոն և խաղացնում էր նորա վերայ բարակ փայտ, երևակայելով թէ ածում է մեծ ջութակի վերայ: Մի անգամ հօր եղբայրը բաշխեց նորան դեղին և փայլուն փոքրիկ ջութակ: Նա գրկում էր, համբուրում էր իւր ջութակը, և փոքր մնաց խելագարուէր ուրախութիւնից. ոչխարի բախտաւոր էր նա, երբ նորա փոքրիկ մատի տակ լարը հնչեցրեց առաջին ձայնը: Նա խոկոյն սկսեց ածել իւր ջութակի վերայ, որով ամենքը զարմացրեց: Թէև՝ նման երևելի երաժիշտ Պոգարտին՝ չէր վերցրել ոչ մի դաս առաջուց, բայց մատաղ հասակից, երբ լինում էին նորա հօր կամ հօր եղբօր տանը երաժշտական երեկոներ, նա այնպիսի ուշադրութեամբ նայում էր երաժիշտների ածելու վերայ որ՝ ինքնին սովորեցաւ դուրս ածել երաժշտական գործերը: Նորա համար շատ հեշտ բաներ սովորել սիրած եղանակը, և ընդ հակառակն՝ շատ դժուար էր մոռանալ մի եղանակ, որը նա սիրել էր:

Մի քանի ժամանակից յետոյ, իւր հօր երաժշտական երեկոներից մէկի ժամանակ նա ածեց իւր դեղնագոյն ջութակի վերայ Պլէյելի կվարտէրը (չորս ձայնով—երաժշտական յօդուած)։ Հաւաքուած երաժիշտները շատ զարմացան և հարցրին թէ՝ ո՞վ է փոքր տղայի վարժապետը, բայց չստացան գոհացուցիչ պատասխան, որովհետև փոքր երաժիշտը դեռ չէր սկսել սովորել։

Երբ Նուլլը 8 տարեկան էր, Ներգէն եկաւ ջութակներ ծախող մի վաճառականի։ Վերա նրանից հօրից գնել իւր համար մի ջութակ, և ընտրեց մի կարմիր գունաւորը։ Այս պատահեցաւ երեկոյին, ջութակը դրին իւր պահարանի մէջ և տարան պահեցին միւս սենեակում, իսկ Օլէն գնաց քնելու, ըստ սովորութեան, իւր ծնողների ննջարանում։

—Ես չկարողացայ քնել, պատմում էր յետոյ ինքն Նուլլը—միտքս ջութակի մասին էր հեռանում գլխիցս։

—Երբ ես համոզուեցայ որ՝ հայրս և մայրս քնած են, դուրս թռայ անկողնից և ոտներիս ծայրերի վերայ զգուշութեամբ գնացի միւս սենեակը, ուր պահուած էր իմ նոր ջութակը։ Ես ցանկանում էի գոնեա մի անգամ նայել նո-

լա վերայ։ Օ, գուշումեամբ բացի պահարանը—կարմիր ջուլհակը կարծես թէ ժպտումէր ինձ։ Ձեռքս դրի նորա վերայ—ջուլհակը կարծես թէ ժպտաց աւելի ուրախ. ես վերցրի կնդնդոցը՝ և նայեցի նորա վերայ։ Ա՛յա այնպէս հաւանելի թուեցաւ ինձ որ՝ ես չհամբերեցի և թեթև կերպով քսեցի նորան լարերի վերայ—լարերը այնպէս քաղցր երգեցին, որ ես քսեցի կնդնդոցը գարձեալ և գարձեալ։—Ես հեռացայ ննջարանից և սկսեցի կամաց կերպով ածել։ Յանկարծ՝ ես ցանկացայ ածել իմ սիրելի Ա ա պ ր իչ օ (Ամակորութիւն—երաժշտական յօդուած), և բոլորովին յափշտակուեցայ։ Ես մոռացայ որ՝ կէս գիշեր էր, մոռացայ որ՝ ծնողներս քնած էլին, բոլորը մոռացայ աշխարհիս երեսին, և սկսեցի ածել ջուլհակիս վերայ աւելի և աւելի բարձր։ . . . . . Յանկարծ ես լսեցի իմ քամակիցս ձայն—Հայրս էր։

—Ա՛յս ի՞նչ է նշանակում, գոչեց նա։ Մի՞թէ կարելի է կէս գիշերին ամբողջ տունը ոտի կանգնացնել այդպիսի աղաղակով։

Ես դողացի, վայր ձգեցի ջուլհակս գետնի վերայ, և նա փշրուեցաւ։ Միւս օրը ուղարկեցին ինձ այն շինելու, բայց ի զուր էր—իմ կարմիր ջուլհակը աւելի պետքական չէր։

Բուլլը առողջ և ընդունակ մանուկ էր։ Նա ամեն բան անում էր արագութեամբ և մեծ եռանդով. թռչումը պարսպների վերայ եղջերաբի պէս, գլորվումը, բարձրանումը ծառերի վերայ սկիւռի պէս. նա երբէք հանգիստ չէր մնում, միշտ բանի էր և միշտ շտապումը ուր և իցէ, այնպէս որ՝ նորան կոչեցին գիշերային մուկ (չղջիկ)։

Ուսումնարանում նա բոլորովին բժտամտանում էր, եթէ վարժապետը ստիպում էր նորան լուծել տախտակի վերայ թուաբանական խընդիրը հին եղանակով, իսկ մտքով նա լուծում էր բոլորովին ուղիղ և շուտով։ Նա երբէք չէր սովորում երաժշտական նօթաները (նօթա), այլ դիտէր իւրաքանչիւր ձայնը բերանացի աւելի առաջ, քան թէ կարող էր որոշել նորան միւս ձայներից անուններով։ Նոկ նօթաների (նօթաներ) կարդալը սովորեց նա՝ երբ դեռ ևս բոլորովին մանուկ էր, միայն նայելով ուրիշ երաժիշտների ածելու վերայ։

Օլէ—Բուլլը տասը տարեկան էր, երբ մի օտարական երաժիշտ համոզեց նորա հայրը թէ՝ տղային հարկաւոր է անպատճառ սովորել երաժշտութեան արուեստը. այն ժամանակ միայն հրաւիրեցին նորա համար վարժապետ։ Ա՛ր-

ժապետը սկսեց իւր դասը՝ պահանջելով որ Օլլէն կանոններին համաձայն բռնէ իւր ջուխակը և կնդնդոցը, ածէ խաղերին (նօթա) համաձայն և չաւելացնէ իւր սեփական փոփոխութիւնները: Ա՛նուկը ի հաճոյս իւր հօր՝ բոլոր ջանքով աշխատութեամբ կատարել վարժապետի խրատները, բայց այն աստիճան վատվրուն էր որ՝ ամենևին չէր կարողանում սովորել երաժշտութեան արուեստը այդ եղանակով: Նա որքան աւելի աշխատութեամբ նա, այնքան աւելի յուսահատվում էր. վերջապէս նորա ջղերը այնպէս խանգարուեցան որ՝ դասի ժամանակ սկսում էր բարձր աղաղակել: Հայրը, փորձով իմանալով որ՝ իւր որդին նման չէ միւս մանուկներին, հասկացաւ որ՝ այդ տեսակ ուսումից ոչինչ օգուտ չէ կարող լինել, և բարւոք համարեց թողնել նորան իւր ազատ զարգացման: Նա արդարև միթէ կարելի էր ստիպել մանուկը պարապել երաժշտութեամբ, երբ նա այնպիսի մատաղ հասակում կարողանում էր ածել յաջողութեամբ երևելի երաժիշտ Պապանինիի Կապրիչիօն, որը նրանից աւելի հմուտ երաժիշտները համարում էին իւրեանց կարողութիւնից բարձր բան:

Նոյնի աւելութիւնը դէպի երաժշտական դա-

սերը յառաջանումէր ո՛չ թէ ծուլութիւնից, այլ նորա վառվռուն բնաւորութիւնը չէր հնազանդվում կանոնաւոր և երկարատև ուսանելուն:

Մեծանալով՝ Օլլէ—Նուլլը հանդիսացաւ իբրև երևելի երաժիշտ—ջութակի վերայ ածող: Ոչ մի ջութակ ածող, բացի ինքն Պագանինիից, չկարողացաւ տալ ջութակին այնպիսի ներգաշնակ հնչմունքներ, որպիսի նա իւր ջութակին: Նա գիտէր ամէն մի լարի վերայ ածել ամբողջ յօդուածներ, կարծես թէ ածումէր շորս առանձին ջութակի վերայ: Այս այնպիսի դժուար բան է որ՝ մինչև այժմ բացի նորանից դեռ ևս ուրիշին ոչ ոքին չէ յաջողել: Նորա շարադրութիւնները լի են քնքուշութեամբ և բանաստեղծական ոգւով: Դաշնաւորները պարգևատրումէին նորան բրիլիանտներով, իսկ բանաստեղծները երգարանումէին նորան զանազան լեզուներով:

ԱՆՏՈՒԱՆ ՊԱՐՄԱՆՏԻԷ
ԿԱՄ
Ա.Գ.ՔԱՏՆԵՐԻ ՀԱՅ

1849 թուին Ֆրանսիայի Մօնտիդիէ քաղաքիկ քաղաքում ապրումէր մի այրի, աղքատ և անբախտ, բայց բարի կին, որը թափումէր իւր բոլոր ոյժը իւր ընտանիքի օրական հացը ձեռք բերելու համար: Անբախտ մայրը աշխատումէր և առաւօտեան, և երեկոյին, և գիշերով, բայց նորա ծանր աշխատութիւնը չէր լինում միշտ արդիւնաւոր:

Տիկին Ընտուանը առաջ շատ բախտաւոր էր, բայց իւր ամուսնու մահը խլեց նորանից բարեկամներ, կեանքի ապրուստ, մինչև անգամ խլեց յոյսը ապագայի վերայ: բայց անբախտութիւնը չէր չորս կողմից—նա դեռ երիտասարդ կին էր և խելացի, ուներ զանազան տեղեկութիւններ, փայլումէր ընդօրինակելի արդարամտութեամբ, պարկեշտութեամբ և կրօնական ջերմեռանդութեամբ:

Մաքառելով դառն ապրումների հետ և անխնայաբար վատնելով իր ոյժերը՝ տիկին Ընտուանը վերջապես ակտարացաւ: Նա համբերութեամբ դիմանում էր իր հիւանդութեան կսկծին, և անկողնում պառկած՝ տրտմութեամբ նայում էր իր զաւակների վերայ, որք ազօթք էին անում և լալիս էին իրենց մօր բարձի մօտ կանգնած: Աղեցին բժիշկ, բայց այդ ի զուր էր, որովհետև նորա նշանակած դեղը առնելու հնարաւոր չկար հիւանդ կնոջ ատն մէջ ոչ մի կոպեկ. ի՞նչ պէտքէր անել, նա մեռնում էր:

—Ո՞վ կխրկէ այս կինը, այս մայրը ընտանեքի, այս քրիստոնեական հոգին, ասաց պառաւ կինը, որը եկել էր իր հարևանի տեսութիւն:

—Աստուած, նուազ ձայնով պատասխանեց հիւանդը:

—Եւ ե՛ս... ասաց անպրանիկ որդին, կամենալով գոնեա մխիթարութեամբ օգնել իր մօր:

Լսելով այդ խօսքերը՝ փոքր Ընտուանը, որ հազիւ տասն և եօթու տարեկան էր, վերցրեց բժշկի գրած դեղի թուղթը, ձայկեց մօր երեսը համբոյրներով և դուս վազելով ատաց նորան.

—Պապի՛ր իմ վերադարձին:

—Ակն ժամից յետոյ փոքր Ընտուանը վերադարձաւ իր մօր մօտ և քաղցր ժպիտով

տուեց նորան հարկաւոր դեղը: Այդ դեղը ունեցաւ փրկարար ներգործութիւն—փոքր ինչ ժամանակից յետոյ տկարը ստացաւ ոյժ և կազդուրութիւն: Այժմ մի միտք անհանգստացնում էր և զբաղեցնում նորան թէ՝

—Արդեօ՞ք որտեղից բերիր այդ դեղը:

—Ինձ մի յայտնիր հնարհակալութիւնդ, ասաց Ընտուանը իւր մօր, ահա գործի գաղտնիքը: Տեսնելով քեզ այնպէս նուազ, այնպէս դեղին, համարեա մեռնելու վերայ, ես ասացի—մեռնել՝ երբ ինքն ճակատագիրը վճռել է մեզ այդ՝ լաւ է, բայց մեռնել՝ երբ մեզ մոռցնում աղքատութիւնը—վատ է: Յետոյ ես վերցրի դեղի թուղթը, վազեցի մեր հարևան տեղագործի մօտ և խնդրեցի թանկագին տեղը, որը քեզ այնպէս հարկաւոր էր, բայց, մայրի՛կ, առանց փողի չկայ առողջութիւն: Մեր հարևանը խստասիրտ էր, անողոքելի էր այնքան ժամանակ—մինչև որ յանկարծ դլխումս ծնուեցաւ մի բախտաւոր միտք:

—Պարո՛ն, վերադարձրէք ինձ իմ մայրը, որը մեռնում է, և ես կապրեմ որ ձեզ ծառայեմ, ես ունիմ ոյժ և առողջութիւն և ամենքը հաւատացնումեն որ՝ ես յիմար տղայ չեմ: Ըրէք բարի գործ և ընդունեցէք դեղի փոխանակ—

ոչ փող, այլ հաւատարմութիւն աշակերտի, ծառայի . . . ասացէք միայն մի խօսք և ես պատրաստ եմ ձեզ համար:

Դեղագործը լաց փոքր ինչ, խղճացաւ և տուեց ինձ դեղը, որը փրկեց քո կեանքը. իսկ այժմ էգուցվանից ես կսկսեմ գնալ և աշխատել նորա դեղանոցի գործարանում: Ո՛չ քեզ, մայրիկ, բանի բոլոր պատմութիւնը:

Մայրը ոչինչ չպատասխանեց որդու զարմանալի պատմութեան վերայ—երբ մայրը ուրախութենից լալիս է, նա չէ կարող խօսել:

Մի քանի տարուց յետոյ դեղագործի աշակերտը արդէն աւելի էր աշխատում իւր հին սիրոյ աննշան և փոքրիկ դեղանոցի գործարանում: 1757 թ. Ընտուան պարմանտիէն նշանակուեցաւ դեղագործի օգնական Դաննովերեան զօրքի դեղանոցում, պատերազմի ժամանակ էր: Ընտուանը հրաշքներ գործեց պատերազմում թէ՛ քաջութեամբ և թէ՛ մարդասիրութեամբ, բայց ինքն էս ատացաւ մի քանի վէրքեր և ապա գերի բռնուեցաւ և տարուեցաւ Գերմանիա: Ըյստեղ Ֆրանկֆուրտ Մային գետի վերայ քաղաքում նորանից խօսք վերցրին չփախչել իւր հայրենիքը և տուին ազատութիւն, բայց այն պայմանով որ՝ նա լինա-

բէ իւր համար մի ընտանիք և այնտեղ տպրի։ Ընտուանը տեղաւորուեցաւ Մէյիէրի տանը և դեղանոցում, որը առաջին պեղատուն էր քաղաքում և երևելի քիմիկոս ամբողջ Գերմանիայում։ Այս Մէյիէրը ունէր մի աղջիկ, 16 տարեկան հրաշագեղ օրիորդ, Մարգարիտ անունով։ Տան տիրոջ ճաշի և նախաճաշի ժամանակ Ընտուանը ուսումնէր իւր չոր հացը իւր առանձին փոքրիկ սենեակում։ Մի անգամ Մէյիէրը հրաւիրեց նորան իւր մօտ նախաճաշին, և Ընտուանը ուրախութեամբ ընդունեց այդ հրաւէրքը։ Նախաճաշի ժամանակ նա չունէր ախորժակ, ուտումէր քիչ, խմումէր աւելի ևս քիչ, և շատ մտածումէր։ Ընկերով իւր այսպիսի դրութեանվերայ՝ Ընտուանը այնու ամենայնիւ զարմացմամբ նկատեց իւր սմանի վերայ մի տեսակ կակուղ գնդակ, որոյ համը դեռ նորան յայտնի չէր, բայց որոյ արտաքին տեսքը խոկոյն շարժեց նորա մէջ մասնիկ զգուանք։

—Ի՞նչ եղաւ քեզ հետ, Ընտուան—հարցրեց Մէյիէրը։

—Ես սարսափումեմ և զզվումեմ այս գընդակից, որը տեսնումեմ սմանիս վերայ. այս ի՞նչ կերակուր է որ ինձ պատճառումէ զզուանք։

—Այդ գետնախնձոր (կարտօֆել) է—պա-

տասխանեց տան տէրը:

—Գետնախնձո՛ր (կարտօֆէլ)... մեր Ֆրանսիայում դորանով կերակրումեն միայն խոզերը:

—Իսկ Գերմանիայում դորան ժողովուրդն եւ կերակրումեն մարդիկ, և այդ աւելի օգտակար է:

—Ա՛ի լաւ դուք, պ. Ա՛էյիէր, մոռացե՛լ էք որ՝ այս տարօրինակ գնդակները բորտուամեան ցաւ էին պատճառում ուժողներին:

—Նա այդ յիմարութիւնը կարդացել եմ 16-րդ դարու գրքերում:

—Ա՛ի լաւ է դուք չգիտէ՞ք որ՝ դոքա և այժմ պատճառումեն ուժողներին տենդ, ցնորք, մահ:

—Նա գիտեմ որ՝ սոքա կերակրումեն ժողովուրդ:... Դուք Ֆրանսիական գիտնական էք, պ. Ընտուան, և դուք պիտի աշխատէք տարածել Ֆրանսիայում գետնախնձորի (կարտօֆէլի) գործածութիւնը, իբրև միջոց, որը չի թողնի ձեր աղքատներին մեռնել քաղցածութիւնից:

Այս խօսակցութիւնից յետոյ Ընտուանը շուտով ստացաւ ազատութիւն: Նա յիշեց իւր մայրը, նա փափագումէր տեսնել իւր հայրենիքը, և մոռանալով սէրը, հարստութիւնը, բախտը, շտապեց դէպի Ֆրանսիան:

Ընդյան շատ տարիներ: Ընտուան պարմանտիէն ապրումէր փարիզում և էր արդէն դե-

պագործի օգնական արքունի հիւանդանոցում վերաւորուած զինուորների համար: 1771 թ. մի օր առաւօտ Ընտուանը ստացաւ սուրհանդակով Ռեզանսոն քաղաքի ճեմարանից ծրագիրը և առաջարկութիւն գրել շարադրութիւն քաղաքական տնտեսականութեան մասին, խոստանալով մեծ վարձատրութիւն տալ նորան, ով կկնարէ միջոց մաքառել սովի հետ ալիւրի փոխանակ դոդծածելով որ և իցէ այլ նիւթ:

Ընտուանը հաղիւ թէ աւարտել էր կարդալը այդ ծրագրի, որը շարժումի մէջ մարդկութեան ամենածանրակշիռ խնդիրը, և ահա դուռը բացուեցաւ և սպասաւորը մտնելով նորա սենեակը՝ դրեց գետնի վերայ մի մեծ պարկ և մի մեծ կողով, և ասաց.

—Իմ աէր, ահա գանազան դեղերի նիւթեր Գերմանիայից ուղարկուած ձեր անունդ:

Բացանելով կողովի երեսը՝ Ընտուանը տեսաւ մի նամակ, որը գրած էր նորան ծանօթի ձեռքով և որոյ մէջ ասած էր այսքան.

—«Դուք գուցէ մոռացել էք Մարգարիտը, բայց ես միշտ կյիշեմ ձեզ և ձեր խոստումնքը, որը տուիք այստեղ Ֆրանկֆուրտում: Ես ուղարկում եմ ձեզ պարկով և կողովով գետնախնձոր (կարտօֆէլ). ձգեցէք այս թանկագին

գնդակները մի օր և իսկ թողած, անպատուղ հողի անկիւնում, աւազի մէջ կամ քարուտ տեղում, և երբ կժողովէք նոցա բերքը, բարեկամ, բաժանեցէք այն ձեզ ծանօթ աղքատներին իւ յիշատակ Մարգարիտի»:

Այդ օրից Ընտուանը վճռեց պատասխանել Նեդանօնի ճեմարանին օգտակար գիւտով և ոչ թէ լոկ խօսքերով: Նա գանեց իւր պարտիզում այդ գնդակները, և այդ օրից սկսեցան նորա համար նոր գիտ հնարողի բոլոր նեղութիւնները, տանջանքները և անյաջողութիւնները:

Ընտուանը փորձեց գործածել իւր օգտակար գիւտը վերաւորուած և ծերացած գինուորների պիտոյքներին, բայց մարդասիրութեան քոյրերը, որք ծառայումէին նոցա Հիւանդանոցում, խափանեցին նորա առաջին փորձերը և նոցա ո՛չ-քրիստոնէավայել հակառակութիւնը շուտով խլեց նորանից գլխաւոր դեղագործի տեղը, որը նա ստացել էր իւր արդարամտութեամբ, հաւատարմութեամբ և արժանաւորութեամբ:

Ընտուանը դիմեց նախարարներին, բայց տերութիւն կառավարող մարդիկ ստիպուած էին այդ միջոցին մաքառել երկրի անփորձութեան հետ և նորա չունէին անգամ մի րոպէ ազատ

ժամանակ մտածել խեղճ մշակների օրական հացի վերայ:

Ընտուանը ծեծեց դիտանականների, հինաանտեսների, փիլիսոփաների դռները, բայց բոլոր այդ երևելի մարդիկ, բոլոր այդ հանճարները լսաստմէին տենդի, բորոտութեան և ամենատեսակ չիմար բանների վերայ, որը նոքա կարդացել էին իւրեանց հին դրքերում: Լուսատուրուած մարդիկ, ծոյլեր, մեծատուններ—ծաղրումէին Ընտուանի առաջարկութեանց և փորձերի վերայ: Զարմանալի բան—մինչև անգամ ինքն ժողովուրդը, որին կամենումէր նա տալ հաց, չնայելով իւր քաղցածութեան և աղքատութեան վերայ՝ զայրանումէր այդ խելացնորի վերայ, որը վատահանումէր կերակուր որոնել մարդոց համար անատուններուն տաշտերում: Վերջապես Ընտուանը գնաց Ֆրանսիայի թագաւորի պալատը. Լուդվիկոս 16-րդը լսեց առանց ծաղրի և զարմանքի համառատ մարդասէրի խօսքերը, որը առաջարկումէր նորան միջոց դառնալ ճշմարիտ բարերար աշխարհի, միջոց—տալ բոլոր քաղցած չքաւորներին օրական հաց:

Թագաւորի առանձին հրամանով Ընտուանին տուին յիսուն և չորս օրավար անպատուղ

և անպետք հոգ: Մի քանի ամսից յետոյ Ընտուանը վերստին ներկայացաւ թագաւորին. այժմ նորա համար բաց էր ճանապարհը—նշանաբանը, որը տուել էր նորան թագաւորը, ստիպեց ամբողջ պալատը խոնարհել ժողովրդից դուրս եկած մարդու առաջև: Ատուցանելով թագաւորին ծաղիկներ, որոց նմանը չկար ոչ արքունի պարտիզում և ոչ պալատի ամենատնօրում, Ընտուանը ասաց.

—Թագաւոր, ծաղիկը երևեցաւ, ես յոյս ունիմ որ՝ կերևայ և պտուղը: Այժմ էքսաւորները պարտական կլինին ձեր արքայական խոստամատուրեան նորանով որ՝ նոքա աւելի և չեն մեռնի քաղցածութիւնից:

—Պարոն,—պատասխանեց թագաւորը սրտաշարժ ձայնով—Ֆրանսիան շնորհապարտ կլինի ձեզ նորա համար, որ՝ դուք գտաք, հնարեցիք հաց էքսաւորների համար:

Լուդովիկոս 16-րդը վինչև երեկոյ պահեց իր հանդերձի կոճակի վերայ Ընտուանից առացած ծաղիկները. արքայազունք, իշխանք, ամենաւականք, նախարարք—շտապեցին հետևել թագաւորի օրինակին, նոյնպէս քաղել տալով և պահելով իրեանց ձեռքին կամ շորի վերայ գեղանախանձորի (կարտօֆէլի) ծաղիկները, և այդ օ-

րը Ս. Լիւդվիկոսի շքանշնաը (խաչը) փոխարինուած էր գեանախնձորի (կարտօֆէլի) արքայական շքանշանով: Միւս օր ամբողջ փարիզում, իսկ շուտով և ամբողջ Ֆրանսիայում խոսումէին միայն Պ. Ընտուանի Հոստոս Պարամանտիէի վերայ: Ընտուանը նստած էր թատրոնում արքայական օթևանում Լիւդուիկոսի և թագուհի Մարիա Ընտուանետտայի մէջ տեղ. նորան գլուխ էին տալի պալատական տիկնայք, նորան ընդունումէր ժողովուրդը ոգևորութեամբ, նորան գովաբանումէին բանաստեղծները:

Այդ ժողովուրդը երբեմն կինումէ շատ անարդարացի. նա միշտ պահում է երևելի աշխարհաքանդների անունները, նա գիտէ աւազակների պատմութիւնը, բայց քաղցածութեան և աղքատութեան ժամանակ կերակրուելով ամենայն օր հաւորնեղի հացով, քաղաքների և գիւղերի աղքատ ժողովուրդը չգիտէ այն բարեկամի և բարերարի անունը, որ տուեց այն նոցա:

Ընտուան պարմանտիէյի յիշատակի համար այծան կանգնացրին Մոնտիդիէ քաղաքում, կից այն համեստ տան, որոյ մէջ յաջողեցաւ նորան մահից փրկել իւր մայրը:

ԴԱՆԹԷ ԱԼԻԳԻԵՐԻ

(Կենսագրութիւն)

Դանթէ Ալիգիէրին Ֆլորենցի էր և ծնուեցաւ Ֆլորենցիա քաղաքում 1265 թ. Փրկչի։ Նորա հայրը պատկանում էր Ֆլորենտինեան հին և նշանաւոր ընտանիքին, բայց նա չտեսաւ իւր երեխայի որդու ոչ փառքը և ոչ դառն տարաբախտութիւնները, որոնցից նա վախճանեցաւ երբ Դանտէն 7 տարեկան էր։ Ընալով որը՝ Դանտէն պատրաստ իր հասակի մի բարերար— Բրունետտո Լատինի, որը հասարակապետութեան քարտուղար էր, շատ հմուտ ուսուցիչ և ինքն երեխայի բանաստեղծ և գիտնական։ Բրունետտոն մեծ ազդեցութիւն ունեցաւ հանճարեղ մանկան մտաւոր զարգացման վերայ, արծարծելով նորա մէջ մանաւանդ քաղաքական ոգին, որպիսի նպատակով ծանօթացնում էր նորան հնչակաւոր բանաստեղծների շարադրութիւնների հետ և մանաւանդ Վիրգի-

Վանուհին առանձին չերեւանդութեամբ սի-
րեց եւ արտաքնապաշտութեամբ նորան։

Վանուհին առանձին չերեւանդութեամբ սի-
լիոսի կնիկանի հետ։ Նայի սրտանից՝ իր
պիտանականութեանը կատարելագործելու համար
Վանուհին գնաց նաեւ Նօյեան և Պաղտա քա-
ղաքները, ուր և հարստացաւ բազմատեսակ գի-
տութիւններով։ Յետոյ պատանեկութեան հա-
սակից Վանուհի մէջ նշմարվում էին հոգեկան
վատ զգացմունքներ. և չնայելով իր զարմա-
նալի աշխատասիրութեան և յառաջադիմու-
թեան մէջ, սիրտ, սիրտ ունէր նա դեռ ինչ տա-
րեկան մանուկ ճանճ ոգու մի փոքրիկ և շատ
գեղեցիկ աղջկայ հետ—Լէատրիչէ Պօրտինա-
րի և սիրից նորան ամենայն սիրով։ Իր ե-
րիտասարդութեան շաղապրանքի մէջ «Նոր
կեանք» անունով Վանուհին բանաստեղծական
յափշտակութեամբ նկարագրում է իր սիրելի
Լէատրիչէի մէջ տղոցքին գեղեցկութիւնը և
մէջ նկրքին վսեմ յատկութիւնները։ Թէև
Լէատրիչէն վախճանուեցաւ շատ մատաղ հա-
սակում, բայց Վանուհին չէր մոռանում նորա
յիշատակը մինչև իր մահուան օրը։ Լէատրի-
չէն նորա համար էր իրրև ուղեցոյց աստղ իր
բոլոր անբախտութեանց մէջ, և դառն արեւում
այս գեղեցիկ աղջկայ յիշատակը ոգեւորում էր
և արտաքնապաշտութեան նորան։

թումեր պարտադել Հաստրակական և քաղաքական գործքերով։ Այդ ժամանակ նորա Հայրենիքում երկու եղեւեղի քաղաքական կուսակցութիւն կար, որք կոչվումէին Վիւիգներ և Վնբելիններ. առաջինը պաշտպանում էր Ռոմի պապի կողմն, երկրորդը—Վերմանիայի կայսեր կողմը, և ոչց ատելութիւն Հակառակութիւնը սաստիկ վառում էր Լոտարիայի, յարուցանելով նաև պատերազմներ։ Ռան և չորս տարեկան Վանտէն իբրև հեծելազօր զօրքի գինուոր ժամանակցեց մի այդպիսի պատերազմում, պաշտպանելով իւր Հայրենիքը—Գելօրենգիան—և ցոյց տալով զարմանալի քաջութիւն, որով ապացուցեց ոչ եղեւեղի քաջատոհմը կարող է լինել նոյնպէս քաջ զինուոր և պաշտպան իւր Հայրենիքի։ Ի տես Հաստրակ եղեւեղի քաջագործութեանը Հռովարեա րատ մեծ ժողով եղել են նոյնպէս եղեւեղի քաջագիներ, նորա միշտ ժամանակել են իրենց Հայրենիքի և իրենց ազգի նշանաւոր գործերին, ցաւել են նորա ցաւերով և ուրախացել են նորա ուրախութիւնով։

Ռան և վեց տարեկան Հաստրակում Վանտէն առաջացաւ 1291 թ. Ջեմա Վօնտաի անուն օրիորդի հետ և ունեցաւ վեց զաւակ. բոլոր այս

կինը իւր բնաւորութեամբ բոլորովին հակառակ էր իւր ամուսնոյ բնաւորութեան և բոլորովին անընդունակ էր բախտաւոր կացուցանել նորան. ոմանք կարծումն են թէ Վանտէն յետոյ բոլորովին բաժանուեցաւ իւր կնոջից: Վանտէն իւր քաղաքում այնպիսի անուն և պատիւ էր վայելում որ՝ 1300 թ. ընտրեցին անդամ քաղաքային կառավարութեան և իւր պաշտօնը կատարումէր այնպիսի արդարութեամբ և չեզոքութեամբ որ՝ մինչև անգամ դուշմանքն իւր անձնական օգուտները, նաև ճարպից շատ թշնամիներ: Յանկանալով լիակատար խաղաղութիւն պարգեւել իւր հայրենիքին Վանտէն առաջարկեց արտաքսել քաղաքից երկու հակառակ կուսակցութեան առաջնորդները և այդ առաջարկութիւնը ընդունուեցաւ և կատարուեցաւ: Այդ երկու տարուց յետոյ Պապի կուսակիցները—Վելֆները օգնութիւն ըստանալով անպատմելեցան, յարձակուեցան քաղաքի վերայ և շատ կատորածներ արին: Այդ առթիւ կոտորեցին Վանտէի կալուածքը, քանդեցին նորա տունը, և իրեանց կողմը դարձնելով նաև միւս քաղաքացիները՝ արտաքսեցին Վանտէին քաղաքից և օրինք հրատարակեցին որ՝ եթէ նա երբ և իցէ կամի ձիթենիքի պիտի

Ցլօրէնցիայի մէջ
չ՝ յաժարացաւ անպատուհասելնամբ մանել իւր
նա, բայց անկարելի եղաւ նմա մանկամարդ իւր միամտակ արբշռանքով,
բռնադատել իւր Հարենի քաղաքը և սաստիկ
ատելութեամբ իւր Հայրենի քաղաքին վրայ։ Վանտէն սաստիկ փափագավէր վերստին Ֆլորէնցիա դառնալ։ Ընդդէմ այսպիսի վիճակի պատահեցաւ նմա ընկերանալ ազգակից մի երիտասարդի, որ ազնուական էր Ֆլորէնցիոյ, և անուն Ֆրանչիա։ Այս երիտասարդ ոչ միայն ազգակից էր Վանտէնի, այլև նորան կենդանի։ Վանտէն իւր մի քանի կտրիճ բարեկամներով մտաւ ի ծառայութիւն Յովհաննու եամբ մանել քաղաքը, բայց այդ չյաջողեցաւ նորան և այնուհետև միաց նա ազգակից իւրով ի մի տեղի։ Երբ չկարացան հայրենասէր Վանտէն կտրած ազգով ի ափիսոսութիւն առաջ Վտարիայում, յետոյ գնաց նաև Ֆրանսիա և Ենգլիա, ուր փարիզ և Օրֆորդ քաղաքներում պիտնական հարցմունքներ բնութեան, բայց վիպասանները չատացան չկարողանալով հասու ցանել դորա համար նշանակած ուրբը։

Ի մի անգամ Ֆլորէնտացիք առաջարկեցին նորան նկատմամբ, եթէ նա կհամաձայնուի հատուցանել առագաստ և հրապարակաւ խոստովանել իւր մեղքերը. բայց նա արհամարհանքով և բարկութեամբ մերժեց այդպիսի առաջարկութիւնը, ասելով թէ՝ նա չէ կատարել այնպիսի գործ, որը արժանի լինէր պատժի։ Ընդդէմ այսպիսի վիճաբանութեան վերստին Վանտէն սաստիկ փափագավէր վերադառնալ իւր Հայրենի քաղաքը և սաստիկ տանջվում էր իւր միամտակ արբշռանքով, բայց

Կրելով դառն ապքաւութիւն, չունենալով շատ անգամ առն, Յանուէն իմ ամիսս ու-ամիսներս։ Նա ապրումէր երբեմն մի որ և իցէ քնանիքում իրեն հիւր, երբեմն մի որ և իցէ վանքում իրեն ուխտաւոր։ Այնջամէս նա զբաղ պատապարան Ամէննոս քարոզում Աւետ Նոմէլօ—ը—Պալէնտա անուանով Հարուստ և իշխան մարդ մօտ, որ մեռաց նորա բարեկամ և պահպանող մինչև նորա մահը։ Յանուէն վախճանեցաւ 1321 թուականին 56 տարեկան հասակում Ամէննոսում, ուր և թաղեցին շքեղ հանդէսով։ Նորա գերեզմանաքարի վերայ արձանագրեցին իւր շարադրած արձանագրութիւնը, որը վերջանում է հետևեալ խօսքերով—

«Այսեղ թաղուած եմ ես, Յանուէ, աքսորուած իմ պապերի երկրից։ Ես ծնուեցայ Ֆլորէնցիայում, եղայ Յանուէի գերեզմանը մինչև այժմ ցուցանուածին ճանապարհորդներին իբրև մի երևելի տեղ և Ամէննան հպարտութեամբ պարծենում է այդպիսի գանձով։ Ֆլորէնցիայի քնակիչները շատ խնդրեցին որ՝ տանեն աշխարհահռչակ բանաստեղծի մարմինը իւրեանց քաղաքը, բայց Ամէննոյի քնակիչները մերժեցին, հպարտելով նաև Ա[illegible] Ընչէլօ մինչդուս-

թիւնը, որը խրատուած էր առ այն պատիւ։ «Ա՛յ, պատուական հոգի, զոր չհամեցաք պահել ձեր մէջ կենդանի Գանտէն, ուստի չէք առնուլ նորան նաև մեռածը»։

Գանտէնունի բառական շատ շարադրութիւններ ունանաւորներով և արձակ ոճով գրուած, նաև երկու հեղինակութիւն լատիներէն լեզուով. բայց ամենաներևելին, որը անմահութիւն տուեց նորա անունին, այդ է նորա «Ճառք ածից կաւատերդութեան»։ Այս գրուածքը ոտանաւորով և բաժանուած է հարիւր երգ կամ գլուխ։ Հանճարեղ բանաստեղծը գործնական և միանգամայն անմահ հանճարով նկարագրէ իր ժամանակակից հասարակութեան և մանաւանդ հոգևորականութեան, պատի, իշխանների և արքունի պալատի պակասութիւնները և վատ կողմերը, յուսալով ուղղել իր հայրենակիցները։ Նայց չհամեցաւ ուղղակի յիշել նկարագրուած մարդոց անունները, նա ալեգանական ոճով ներկայացնում է Ժողք, Հաւատան կամ Աստրատան և Երքայութիւն։ Ժողքի մէջ մեզաւորները տեսնում իրենց բազմաթիւ յանցանքները և կրում են տարատիւլի տանջանքներ, Հաւատում նոքա մարգուածներից և Երքայութեան մէջ ար-

պարագած վայելումն յաւիտենական երջանկութեան։

Ի յս հիմնոյի բանաստեղծութիւնը սկսեց Դանտէն 1298 թ. ուղեկանին և աւարտեց 1321 թ. ամենայն ժամանակներուն, և թէև գրուած է խիստ մի քիչ ոճով, բայց ունի բազմաթիւ թարմութիւններ և բացատրութիւններ բոլոր ներքոտական յեղուներով, և այնչափ լի է բանաստեղծական ոգուով որ մինչև այժմ միանգամայն յաւիտենական արդացոյն ուշադրութիւնը և երբէք չի հնանայ, չի կորցնի իր արժանաւորութիւնը։ Միանակնեցի քննիչներն և հեղինակները խիստ մեծ գովաբանութեամբ խօսուն են այս բանաստեղծութեան վերայ։

ԴՊՐՈՑ

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԱՄՍԱԳԻՐ

1876 ամի

ԴՊՐՈՑԻ նպատակն է — իւր կարողութեան չափ ձեռնատու լինել ազգային ուսումնարանների յառաջադիմութեան։

ԴՊՐՈՑԸ բաղկանում է երկու մասնից։ Առաջին մասն — մանկավարժական ուղեցոյց վարժապետներին, տեսուչներին և հոգաբարձական վարչութիւններին։ Երկրորդ մասն — աշակերտների համար ԸՆԹԵՐՑՈՒԹԻՒՆ, հարուստ զանազան օգտակար և հարկաւոր տեղեկութիւններով։

ԴՊՐՈՑԻ տարեկան բաժանորդագինն է ճանապարհածախքով (կանխիկ վճարելի)—

1) Ռուսաստանի համար վեց րուբլ. արծ.

2) Տաճկաստանի և Պարսկաստանի համար եօթն րուբ. արծ.

Բաժանորդագրութիւններով, յօդուածներով և ամենայն տեսակ հարցմունքներով և պահանջմունքներով հարկաւոր է դիմել ուղղակի ԴՊՐՈՑԻ խմբագրութեան այս հասցէով.

1) Էայեքէն. Վաղարշապատ (կամ Էջմիածին). Ի. Դպրոցի անուան վանք, ԴՊՐՈՑԻ խմբագրութեան։

2) Ռուսերէն. *Въ Вагаршапатъ* (или *въ Эчміадзинѣ*), *Редакцію журнала ДПРОЦЪ, въ монастырѣ св. Гаяне.*

ԴՊՐՈՑԻ խմբագրութիւնը խնդրում է չխառնել տպարանի Ընթացք ամսագրի խմբագրութեան հետ բաժանորդագիներ կամ յօդուածներ ուղարկելու կողմից, և դորանով չպատճառել դանդաղ դժուարութիւններ երկու խմբագրութեան էլ։

ԽՄԲԱԳԻՐ — ՀՐԱՏԱՐԱԿԻՉ
ՎԱՀԱՆ ՎԱՐԴԱՊԵՏ ՌԱՍՏԱՄԱՏԵԱՆՑ,
վանահայր Ս. Գայիանէի վանից։